ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արագածոտնի մարզ, Թալին համայնք, գ. Արագածավան

27 նոյեմբեր 2024

Ս/թ. նոյեմբերի 27-ին, ժամը 12.00 ՀՀ Արագածոտնի մարզի, Թալին համայնքի, Արագածավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «ՍԹՈՈՒՆ ԱՅԼՆԴ» ՍՊԸ կողմից նախաձեռնած ՀՀ Արագածոտնի մարզի Արտենիի օրսիդիանի հանքավայրի 3-րդ տեղամասի օրսիդիանի արդյունահանման աշխատանքների, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ հանրային քննարկումներ:

Մասնակցեցին՝

ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետ՝ Նելլի Նասիբյանը, Թալին համայնքի ղեկավարի տեղակալ՝ Գ. Թադևոսյանը, Արագածավան համայնքի վարչական ղեկավար՝ Ա. Նազարյանը, Թալին համայնքի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Գ. Միրզախանյանը, «ՍԹՈՈՒՆ ԱՅԼՆԴ» ՍՊԸ տնօրեն՝ Գ. Խաչատրյանը, «Գեոէկոնոմիկա» ՓԲԸ գլխավոր տնօրեն՝ Ա. Բաղդասարյանը և համայնքի բնակիչները:

Մասնակիցների ցանկը կցվում է

Զեկուցումներ՝

Բացման խոսքով հանդես եկավ Թալին համայնքի ղեկավարի տեղակալ՝ Գ. Թադևոսյանը:

Ողջունելով մասնակիցներին՝ պարոն Թադևոսյանը բացեց քննարկումը, ներկայացրեց լսման մասնակիցներին և խոսքը փոխանցեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետ՝ Նելլի Նասիբյանին:

Բարև Ձեզ, ներկայանամ՝ Շրջակա միջավայրի նախարարության փորձաքննության կենտրոնի տվյալ գործի փորձագետ: Հակիրճ ներկայացնեմ թե ինչպես է ընթացել փորձաքննությունը: Նախատեսվող գործունեությունը փորձաքննվել է 2014 թ.-ին ընդունված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության» մասին օրենքի դրույթներին համապատասխան: Այսինքն փորձաքննությունը ընթացել է 2 փուլով՝ նախնական և հիմնական: Նախնական փուլի ընթացքում ընկերությանը փորձաքննական կենտրոնի կողմից տրվել է տեխնիկական առաջադրանք, որի հիման վրա իրականացվել է, կազմվել և ներկայացվել է ՇՄԱԳ հաշվետվություն: Փորձաքննության փուլում հաշվետվությունը ուղարկվել է նախարարությունների և Շրջակա միջավայրի նախարարության մի շարք վարչությունների, որոնց կողմից ստացված դիտողությունները և մեր կողմից ներկայացված առաջարկությունները հետ է վերադարձվել ընկերությանը, որպեսզի իրականացվի համապատասխան շտկումները, լրացումները և բացթողումները: Եվս մեկ անգամ փորձաքննական կենտրոն ներկայացնելուց հետո կազմակերպվել է այս հանրային քննարկումը՝ թվով արդեն չորրորդը, կատարվել է պատշաճ ծանուցումներ, քննարկման մասին տեղեկատվությունը տեղադրվել է Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում, տպագրվել է թերթում, ծանուցվել է նաև խոշորացված համայնքին: Ուզում եմ նաև հավելել, որ հաշվետվությունում ներկայացված է բոլոր հնարավոր ազդեցությունները նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի բաղադրիչների վրա՝ հողային և ջրային ռեսուրսների, մթնոլորտային օդի և կենսաբազմազանության, տրվել է համապատասխան միջոցառումները հնարավորինս նվազեցնելու և բացառելու այդ ազդեցությունները: Իրականացվել է նաև գետնամերձ կոնցենտրացիաների համար նախատեսվող ցրման հաշվարկը, որին նաև ընդարկումներին կանդրադառնանք: Հակիրճ այսքանը:

Խոսքը փոխանցվում է «Գեոէկոնոմիկա» ՓԲԸ գլխավոր տնօրեն՝ Ա. Բաղդասարյանին.

- Բարև ձեզ համայնքի հարգելի ներկայացուցիչներ:

Ես Արամ Բաղդասարյանն եմ, Գեոէկոնոմիկա ՓԲԸ-ի՝ նախագծող կազմակերպության գլխավոր տնօրենը: Այս նախագծի շրջանակներում սա մեր չորրորդ հանդիպումն է, որի նպատակն է ձեզ ներկայացնել Արտենիի օբսիդիանի հանքավայրի 3-րդ տեղամասից օգտակար հանածոյի արդյունահանման լրամշակված նախագիծը:

1. Տեղամասի օբսիդիանի որակն ու ֆիզիկամեխանիկական հատկությունները բավարարում են 41.07-90 OUS-ի տեխնիկական պահանջներին և կարող է օգտագործվել արհեստագործական բարի արդյունահանման և դեկորատիվ-զեղազարդային իրերի արտադրության համար:

2. Տեղամասի օգտակար հանածոն իր ճառագայթահիգիենիկ հատկություններով համապատասխանում է նորմատիվ փաստաթղթի պահանջներին և կարող է օգտագործվել շինարարական աշխատանքներում առանց սահմանափակումների:

3. Տեղամասի հիդրոերկրաբանական, լեռնաերկրաբանական և լեռնատեխնիկական պայմանները միանգամայն բարենպաստ են դրա բաց եղանակով մշակման համար:

4. Օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարները կազմում են մոտ 78026 տ, օգտակար հանածոյի կորուստները բացահանքերի կողերում և հատակում կազմում են միջինը 12 %: Մակաբացման ապարների ծավալը կազմում է 20.1 հազ. մ³:

5. Բացահանքի տարեկան արտադրողականությունը կազմում է 3950.0 մ³ օբսիդիանի զանգված, ծառայման ժամկետը՝ 7,8 տարի: Տարեկան մարվող պաշարների քանակը 4489.0 մ³ է:

6.Մակաբացման ապարները ավտոինքնաթափերով տեղափոխվում են բացահանքի մոտակայքում գտնվող լցակույտ, տեղափոխման միջին հեռավորությունը կազմում 250 մ: Այնուհետև բացահանքի հատակում, համապատասխան հրապարակ ապահովելու պարագայում, նախատեսվում է իրականացնել ներքին լցակույտաձևավորում:

7.Տեղամասից օգտակար հանածոյի արդյունահանումը նախատեսվում է իրականացնել էքսկավատոր-ավտոհինքնաթափ համակցությամբ:

8. Բացիանքում բոլոր լեռնային աշխատանքները պետք է կատարվեն բաց եղանակով մշակվող հանքավայրերի գործող անվտանգության միասնական կանոններին (ԱՄԿ) և շահագործման տեխնիկական կանոններին (ՇՏԿ) խստիվ համապատասխան:

Այժմ ներկայացնեմ ՇՄԱԳ հաշվետվությունը, որը մշակվել է ՀՀ օրենսդրության բոլոր պահանջներին համապատասխան:

Տեղամասը ներկայացված է գյուղատնտեսական նպատակների համար անօգտագործելի տարածքներով: Այդպիսի տարածքներում բաց եղանակով տեղամասի շահագործումն առաձնակի բացասական ազդեցություն չի թողնում շրջակա միջավայրի վրա: Տեղամասի տարածքը նաև զուրկ է շինարարական և կոմունիկացիոն կառույցներից:

Շահագործական աշխատանքների վնասակար ազդեցությունը շրջակա միջավայրի վրա կարտահայտվի հիմնականում շարժիչներից մթնոլորտ գազերի արտանետմամբ: Փոշեգոյացում կլինի ավտոտրանսպորտի աշխատանքի ժամանակ, պատրաստի արտադրանքի տեղափոխման ընթացքում:

Տեղամասի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի աղտոտվածությունը նվազագույնի հասցնելու նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- պարբերաբար հսկել մթնոլորտային օդի մաքրությունը բացահանքում,ավտոճանապարհներին և մակաբացման ապարների կուտակման տեղերում՝ պահպանելով օդում փոշու սանիտարական նորմը: Փոշենստեցման նպատակով պարբերաբար կատարել ջրցանում,
- օգտագործվող սարքավորումները (բուլդոզեր, էքսկավատոր,

ավտոտրանսպորտ) աշխատացնել սարքին վիճակում,

➢ օգտակար հանածոյի հանույթից հետո բաց լեռնային աշխատանքներով խախտված տարածքներում իրականացնել ռեկուլտիվացիոն աշխատանքներ: Տեղամասի շահագործումը չի բերի տեխնածին վտանգավոր երևույթների առաջացման,իսկ նախատեսված բնապահպանական միջոցառումների իրականացումը նվազագույնի կհասցնի վնասակար ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Վերջում հավելեմ նաև, որ կստեղծվեն աշխատատեղեր, որոնք կզբաղեցնեն հիմնականում համայնքի բնակիչները՝ համապատասխան որակավորում ունենալու դեպքում, լրացուցիչ մուտքեր կապահովվեն ինչպես պետական բյուջե, այնպես էլ համայնքային:

Շնորհակալություն, խնդրեմ, եթե հարցեր կան սիրով կպատասխանեմ:

Մեջբերում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետ՝ Նելլի Նասիբյանի կողմից:

- Հավելենք, որ մենք ունենք 2 բացահանք:

  Արձագանք Ա. Բաղդասարյանի կողմից.
- Ունենք բացահանքի 2 տեղամաս՝ հյուսիսային և հարավային լանջերին: Այսպես ասած պաշարները հաստատվել են 2 բլոկով, մեկը ձորակի հյուսիսային լանջին է, մյուսը՝ հարավային: Մենք ուրիշ ձև չենք կարող նախագծել, այդ բոլոր պաշարները պետք է արդյունահանվեն:

  Հարց համայնքի բնակչի կողմից.
- Մոտավոր տարածքը գիտեք որտեղ է:

  Պատասխան Ա. Բաղդասարյանի կողմից.
- Տարածքը քարտեզներով և կորդինատներով ներկայացված է:

  Հարց Թալին համայնքի ղեկավարի տեղակալ՝ Գ. Թաղևոսյանի կողմից:
- Այդ հանքի մակերեսը արդեն բացված է՞:

  Պատասխան Ա. Բաղդասարյանի կողմից.
- Ոչ, մակաբացման ապարներ կան, այնտեղ նախկինում ինչ որ աշխատանքներ են եղել, այդ աշխատանքներից հետո իրականացվել է երկրաբանական հանույթ, այսինքն տոպո-մարկշեյդրական չափագրում է արվել, ըստ որի պարզվել է, որ այնտեղ

արդյունահանում է տեղի ունեցել: Դրանից հետո այդ քանակը ֆիքսել ենք՝ 78.26 հազար տոննա մնացորդային պաշար:

Հարց Ն. Նասիբյանի կողմից.

- Այսինքն նախկինում որոշակի արդյունահանման աշխատանքներ իրականացվել է՞: Եվ աշխատանքները իրականացվելու են ապրիլից հոկտեմբեր ամիսների՞ն, և կրելու ե՞ն սեզոնային բնույթ:

Պատասխան Ա. Բաղդասարյանի կողմից.

Ոնց որ թե , այո:

Հարց Թալին համայնքի ղեկավարի տեղակալ՝ Գ. Թաղևոսյանի կողմից:

- Իսկ նախկինում մոտավորապես ե՞րբ է արդյունահանվել:

Պատասխան Ա. Բաղդասարյանի կողմից.

- Դա եղել է 2017թ-ից առաջ:

Հարց Թալին համայնքի ղեկավարի տեղակալ՝ Գ. Թաղևոսյանի կողմից:

- Այսինքն ապօրինի արդյունահանում է՞ եղել:

Պատասխան Ա. Բաղդասարյանի կողմից.

- Ես այդ հարցին չեմ կարող պատասխանել, համապատասխան օրգանները կարող են պատասխանել, մենք ուղղակի ֆիքսել ենք, որ այդտեղ ինչ որ արդյունահանում եղել է:

Մեջբերում Արագածավան համայնքի վարչական ղեկավար՝ Ա. Նազարյանի կողմից.

- Որպես վարչական ղեկավար ցանկություն կունենայի, որ վերջին հանրային քննարկմանը մեր հանրությունը ակտիվ մասնակցություն ունենա, կարևոր հարցեր տան, որպեսզի հետագայում չդիտվի ուրիշ ձև:

Հավելում Ա. Բաղդասարյանի կողմից.

- Ցանկացած այս տեսակ գործունեության արդյունքում առաջացած ձեռնարկատիրությունը ենթադրում է նաև սոցիալական ծրագրեր, որոնք ֆիքսվում են ինչպես նախագծում, այնպես էլ ընդերքօգտագործողի և պետության միջև կնքվող պայմանագրերում:

Հարց Թալին համայնքի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Գ. Միրզախանյանի կողմից.

- Ընդերք օգտագործման պայմանագրով ինչքա՞ն գումար է նախատեսված:

Պատասխան Ա. Բաղդասարյանի կողմից.

- Դեռ պետք է դրական եզրակացություն լինի, պետությունը պետք է թույլատրի, որ արդյունահանում լինի, և այդ ընթացքում կնքվում է պայմանագիր պետության և ընդերք օգտագործողի միջև: Ես գիտեմ, որ 2 տոկոսի չափով բնօգտագործման վճարներից զատ է պետական բյուջե:

Հարց Ն. Նասիբյանի կողմից.

- Պարոն Բաղդասարյան տեղամասերը շահագործվելու և՞ն հաջորդաբար:

Պատասխան Ա. Բաղդասարյանի կողմից.

- Այո, հաջորդաբար է շահագործվելու, առաջինը հյուսիսային լանջն է շահագործվելու, որպեսզի բնապահպանական վնաս չլինի, հետո արդեն անցնելու ենք ներքևի մասին:

Հարց համայնքի բնակչի կողմից.

- Իսկ աշխատանքները ե՞րբ եք սկսելու:

Պատասխան Ա. Բաղդասարյանի կողմից.

- Երբ որ այս ամենինչը վերջանա, հողի կատեգորիա պետք է փոխվի այնտեղ, կառավարության որոշում պետք է լինի, երևի գարնանը:

Ն. Նասիբյանը դիմելով համայնքի բնակիչներին՝ հարց է բարձրացնում.

- Դուք, ավելի շատ ծանոթ լինելով տեղանիքին, ի՞նչ կարծիքի եք որևէ խոչընդոտ կա բնապահպանական տեսանկյունից, օրինակ գրունտային ջրեր, հատուկ պահպանվող տարածքներ:

Պատասխան համայնքի բնակչի կողմից.

- Դե բնական է չկան, որովհետև տեղամասում մի քանի հանքեր են գործում, ինձ թվում է, եթե խնդիր լիներ չէին գործի, քանի որ ՀՀ օրենքով կարգավորվում է այդ ամենը և եթե ՇՄԱԳ-ով դրական եզրակացությունը լինում է ուրեմն նորմալ է, և չի խախտվի ոչ մի նորմատիվ: Ու այդ տեղանքը գյուղից բավական հեռու է:

Մեջբերում Թալին համայնքի ղեկավարի տեղակալ՝ Գ. Թադևոսյանի կողմից:

- Քանի որ տնօրենը եկավ, անցած լսումների ժամանակ մի քանի բան ենք արձանագրել, դա էլ ներկայացնեմ.

Երրորդ լսումից առաջ տնօրենը համայնքին ավտոբուս էր նվիրել, ուղղակի իր արդյունավետությունը քիչ էր և մենք հետ ենք վերադարձրել այն: դրանից հետո պայմանավորվածություններ են եղել բնակչության և տնօրենի միջև՝ համայքնում սոցօգնության և ներդրումների մասով: Տնօրենն արդեն իր ներդրումն է ունեցել

մշակույթի տան շինարարության մասով, այդ ամենը ողջունելի է և կխնդրեմ ներկայացնել:

Արձագանք «ՍԹՈՒՌԻՆ ԱՅԼՆԴ» ՍՊԸ տնօրեն՝ Գ. Խաչատրյանի կողմից.

- Մենք արդեն մեր ներդրումը կատարել ենք համայնքի հաշվին, բացի դրանից նաև համայնքապետի հետ համաձայնության ենք եկել մի ուրիշ բարի գործ կատարել: Ճիշտ է դա արվել է Թալին համայնքի համար, դրանով արդեն հենց համայնքապետարանն է զբաղվում՝ 1000-1500 հոգի անվճար բուժզննում կանցնեն, և հետագա բուժումները կլինեն 10-50 տոկոս զեղչված՝ մեր ընկերության հաշվին: Նաև այն ընտանիքները, որոնք որ իվիճակի չեն գնան հասնեն Երևան, ամսական 1 անգամ Թալինի հիվանդանոցում կլինի բաց դռների օր, որտեղ բժշկական անձնակազմը սարքավորումներով կգան և կիրականացնեն բուժզննումներ: Մեջբերում Թալին համայնքի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Գ. Միրզախանյանի կողմից.
- Խոսքս վերաբերվում է մեր համայնքի ղեկավարի կողմից որդեգրած քաղաքականությանը, որ համայնքում ցանկացած բիզնես գործունեություն ենթադրում է նաև աջակցություն համայնքին՝ բիզնեսի շահույթից: Տնօրենն արդեն ներկայացրեց ծրագիրը և դա շատ ողջունելի է: Բարի աշխատանքային գործունեություն եմ ցանկանում Ձեզ:

Ն. Նասիբյանը դիմում է բնակավայրի ղեկավարին.

- Դուք որևէ դիտարկում կամ առաջարկություն ունե՞ք:

Պատասխան Արագածավան համայնքի վարչական ղեկավար՝ Ա. Նազարյանի կողմից.

- Ես որևիցե խնդիր չեմ տեսնում, կարևորը բիզնեսը գործի և մեր համայնքի համար ծառայի, տեսնում ենք արդեն սկիզբն արված է և կցանկանայինք, որ մեր համայնքին և ժողովրդին չանտեսեն և մեր կողքին կանգնած լինեն:

Մեջբերում Ն. Նասիբյանի կողմից.

Ես ամփոփեմ: Ծանուցումից հետո 18 աշխատանքային օրվա ընթացքում ձեր առաջարկություններն ու դիտողությունները կարող եք ներկայացնել

Շրջակա միջավայրի նախարարության փորձաքննական կենտրոն: Եթե որևէ այլ հարցեր կամ կարծիքներ չկան, ամփոփենք հանրային լսումները:

Քանի որ հարցեր չկային պարոն Թաղևոսյանը ամփոփեց նիստը:

Ի պատասխան պարոն Թաղևոսյանի հարցմանը՝ ներկաները տվեցին իրենց համաձայնությունը նախատեսվող գործունեությանը:

Նախաձեռնողները շնորհակալություն հայտնեցին մասնակիցներին և հանրային լսումն ավարտվեց:

Սույն արձանագրությունը կազմվել է երեք օրինակից, որից մեկ օրինակ տրամադրվել է հանրային քննարկումների պատասխանատու կողմին՝ Արագածոտնի համայնքին, երկրորդ օրինակը տրվել է հանրային քննարկումների մասնակից «Սթոուն Այլնդ» ՍՊ ընկերությանը և երրորդը՝ ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ին:

Հանրային քննարկումների վարող և
Պատասխանատու Թալին համայնքի
Ղեկավարի տեղակալ՝ *Գ. Թաղևոսյան*

«ՍԹՈՈՒՆ ԱՅԼՆԴ» ՍՊԸ
Տնօրեն՝ *Գ. Խաչատրյան*

Հանրային քննարկումների արձանագրող՝ *Մ. Վարդանյան*